



«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀԶ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խոթենացի 27ա/1
“London Business Group” JV LLC
27a Khotenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թել-Սել» Փակ Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերին

Մեր կողմից իրականացվել է «Թել-Սել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել ու անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:


Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Աուդիտի ղեկավար՝

Գևորգ Մովսիսյան




11 հունիսի, 2014 թ.



Տնօրեն՝

Տիգրան Չորյան




Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն


(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	272,399	173,518
Ոչ նյութական ակտիվներ	5	29,211	27,733
Գուդվիլ	6	1,157,700	1,157,700
Հետաձգված հարկային ակտիվներ	7	3,767	2,930
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8	6,900	11,950
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>		<i>1,469,977</i>	<i>1,373,831</i>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Ապրանքանյութական պաշարներ	9	16,048	8,551
Դեբիտորական պարտքեր	10	308,076	168,509
Տրված կանխավճարներ	10	22,917	7,125
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	982,677	692,785
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8	3,945	2,390
Այլ ընթացիկ ակտիվներ	12	61	99
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>		<i>1,333,724</i>	<i>879,459</i>
<i>Ընդամենը ակտիվներ</i>		<i>2,803,701</i>	<i>2,253,290</i>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	13	30,000	30,000
Պահուստային հիմնադրամ	13	25,000	4,500
Չբաշխված շահույթ	13	870,489	406,212
<i>Ընդամենը մաշկ կազմակերպության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ</i>	13	<i>925,489</i>	<i>440,712</i>
Չվերահսկվող բաժնեմաս	13	33,878	36,447
<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>	13	<i>959,367</i>	<i>477,159</i>
Պարտավորություններ			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	14	233,742	135,034
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		<i>233,742</i>	<i>135,034</i>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	14	46,114	590,722
Կրեդիտորական պարտքեր	15	1,508,806	963,508
Ստացված կանխավճարներ	15	36,837	56,013
Պահուստներ	16	18,835	30,854
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>		<i>1,610,592</i>	<i>1,641,097</i>
<i>Ընդամենը պարտավորություններ</i>		<i>1,844,334</i>	<i>1,776,131</i>
<i>Ընդամենը կապիտալ և պարտավորություններ</i>		<i>2,803,701</i>	<i>2,253,290</i>

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Ա. Ազատյան




Գլխավոր հաշվապահ՝
Ե. Մարյանյան



11 հունիսի, 2014 թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

(ՀՀ հազ. դրամներով)	Կանոնադրական կապիտալ	Պահուստային հիմնարկում	Չբաշխված շահույթ	Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	30,000	370	23,974	54,344	-	54,344
Համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	386,368	386,368	(1,578)	384,790
Հատկացում պահուստային հիմնարկում	-	4,130	(4,130)	-	-	-
Դուստր ընկերության բաժնեմասի փոփոխություն	-	-	-	-	38,025	38,025
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	-
2012թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ	30,000	4,500	406,212	440,712	36,447	477,159
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	30,000	4,500	406,212	440,712	36,447	477,159
Համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	684,777	684,777	(2,569)	682,208
Հատկացում պահուստային հիմնարկում	-	20,500	(20,500)	-	-	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(200,000)	(200,000)	-	(200,000)
2013թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ	30,000	25,000	870,489	925,489	33,878	959,367

Կլից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Ա. Ազատյան



Գլխավոր հաշվապահ՝
Ե. Մարյանյան

(Handwritten signature in blue ink)

11 հունիսի, 2014 թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սկզբնական մնացորդ	11	692,785	606,191
Գործառնական գործունեություն			
<i>Մուտքեր գործառնական գործունեությունից</i>			
Մուտքեր ծառայությունների մատուցումից		1,301,928	2,713,000
Մուտքեր վճարահաշվարկային գործունեությունից		66,087,467	40,851,158
Այլ մուտքեր		227,503	96,802
<i>Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից</i>		<u>67,616,898</u>	<u>43,660,960</u>
<i>Ելքեր գործառնական գործունեությունից</i>			
Ձեռքբերված ապրանքների ու նյութերի դիմաց		45,161	1,185
Ստացված աշխատանքների ու ծառայությունների դիմաց		670,217	732,468
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		181,264	150,295
Սոցիալական ապահովագրության վճարներ		5,924	22,212
Հարկեր և այլ պարտադիր վճարներ		311,785	71,342
Ելքեր վճարահաշվարկային գործունեությունից		65,104,749	41,033,198
Այլ վճարներ		215,899	950,564
<i>Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից</i>		<u>66,534,999</u>	<u>42,961,264</u>
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		1,081,899	699,696
Ներդրումային գործունեություն			
<i>Մուտքեր ներդրումային գործունեությունից</i>			
Փոխառությունների հետվերադարձ		10,475	164,400
Ավանդի տոկոսներ		-	1,243
Այլ մուտքեր		-	2,719
<i>Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից</i>		<u>10,475</u>	<u>168,362</u>
<i>Ելքեր ներդրումային գործունեությունից</i>			
Հիմնական միջոցների ձեռքբերում		206,354	118,969
Փոխառությունների տրամադրում		7,195	153,300
<i>Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից</i>		<u>213,549</u>	<u>272,269</u>
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		(203,074)	(103,907)

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
<i>Մուտքեր ֆինանսական գործունեությունից</i>			
Վարկերի և փոխառությունների ստացում		1,521,624	-
Այլ մուտքեր		-	-
<i>Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից</i>		<u>1,521,624</u>	-
<i>Ելքեր ֆինանսական գործունեությունից</i>			
Վարկերի և փոխառությունների մարում		1,984,758	479,318
Տոկոսների վճարում		51,026	87,782
Վճարված շահաբաժին		192,748	-
<i>Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից</i>		<u>2,228,532</u>	<u>567,100</u>
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		(706,908)	(567,100)
Դրամական միջոցների փոփոխություն		171,917	28,689
Արտարժույթային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		117,975	57,905
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	11	982,677	692,785

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Ա. Ազատյան

Գլխավոր հաշվապահ՝
Ե. Մարյանյան

11 հունիսի, 2014 թ.



ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ և իրավական կարգավիճակը

«Թեյ-Սեյ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Մայր կազմակերպություն) գրանցվել է ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալությունում 29.05.2007 թ-ին, նրա գործունեության ժամկետը սահմանափակված չէ:

Մայր կազմակերպության իրավաբանական հասցեն.

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 13:

Մայր կազմակերպության կանոնադիր կապիտալը և բաժնետերերը.

Կանոնադիր կապիտալը կազմում է 30,000 հազ. դրամ: Թողարկվել են 150 հազ. դրամ անվանական արժեքով 200 հատ հասարակ բաժնետոմսեր, որոնք տեղաբաշխված են բաժնետերերի միջև հետևյալ կերպ.

- Տաթևիկ Ավետիսյան - 22.5 % բաժնեմասի տեր,
- Արամ Սարգսյան - 42.5 % բաժնեմասի տեր,
- Եվգենի Տրեյստեր - 35.0 % բաժնեմասի տեր:

Մայր կազմակերպության տնօրենը.

Արամ Ազատյան՝ տնօրեն է գրանցվել 20.10.2008 թ-ին:

Մայր կազմակերպության գործունեության առարկան.

Վճարահաշվարկային և դրամական փոխանցումների իրականացման ծառայությունների մատուցում:

Դուստր ընկերություններ.

«Թեյ-Սեյ Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ գրանցված 29.08.2007 թ-ին: 2012 թ-ին կատարվել է մասնակիցների փոփոխություն՝ բաժնեմասերի 100% փայտեր է դարձել «Թեյ-Սեյ» ՓԲԸ-ն:

«Մեզա Պանտերա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ գրանցված 30.01.2007 թ-ին: 01.01.2012 թ-ի դրությամբ «Մեզա Պանտերա» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի տերն է եղել «Թեյ-Սեյ» ՓԲԸ-ն: 2012 թ-ին «Թեյ-Սեյ» ՓԲԸ-ն վաճառել է իր բաժնեմասի 50%-ը Իտալիայի քաղաքացի Դիեգո Տրամոնտանոյին: 31.12.2013 թ-ի դրությամբ «Թեյ-Սեյ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Մեզա Պանտերա» ՍՊԸ-ի 50% փայտերը: 2013 թ-ի ընթացքում «Թեյ-Սեյ» ՓԲԸ-ն ունեցել է գերիշխող վերահսկողության ազդեցություն «Մեզա Պանտերա» ՍՊԸ-ի նկատմամբ, այդ պատճառով «Մեզա Պանտերա» ՍՊԸ-ն դիտվում է, որպես Դուստր ընկերություն և մասնակցում է համախմբմանը:

Դուստր ընկերությունների գործունեության առարկան.

«Թեյ-Սեյ Սերվիս» ՍՊԸ՝ դրամական փոխանցումների ապարատների վարձատվություն, սպասարկում և գովազդային ծառայությունների մատուցում:

«Սեգա Պանտերա» ՍՊԸ՝ նոր շուկաների ուսումնասիրություն և այլ տնտեսական գործունեության իրականացման միջոցով շահույթի ստացում:

Խումբ.

«Թեյ-Սեյ» ՓԲԸ-ն, «Թեյ-Սեյ Սերվիս» ՍՊԸ-ն և «Սեգա Պանտերա» ՍՊԸ-ն հետագայում իրար հետ կկոչվեն Խումբ:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ ՀՀՄՄԽ) և Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից հաստատված Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ ՖՀՄՄ) համաձայն:

2.2 Ներկայացված ժամանակահատված և ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ այն դեպքերի, որոնց մասին նշված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է Խմբի՝ 2013 թ-ի դեկտեմբերի 31-ի և 2012 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (համեմատական ամենավաղ տեղեկատվություն) ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Խումբը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ՖՀՄՄ-ի համաձայն պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- ✓ չի ճանաչել հողվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՄՄ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ✓ ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՄՄ-ով,
- ✓ ՖՀՄՄ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

2.3 Ղեկավարության գնահատումներ և դատողություններ

ՓՄԿ ՖՀՄՄ-ի և ՀՀ հաշվապահական հաշվառման օրենսդրությամբ պահանջվում է, որ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում ղեկավարությունը կատարի անհրաժեշտ գնահատումներ, կանխատեսումներ և ենթադրություններ՝ կիրառելով արժանահավատության (հաշվենկատության), էականության և համադրելիության սկզբունքները: Այդ դատողությունները կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների՝ ակտիվների ու պարտավորությունների, եկամուտների ու ծախսերի չափման ժամանակ: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումները ճանաչվում են դրանց վերանայման ժամանակաշրջանում, ինչպես նաև ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա դրանք կարող են ազդեցություն ունենալ:

2.4 Գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթ

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության գործառնական արժույթը: Դեկլարացիայի համոզմամբ՝ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունները և ամենահարմարն է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:

ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.5 Համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Խումբը ներկայացնում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները համաձայն ՖՀՄՍ-ների:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս միավորվել են Մայր Կազմակերպության և Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները տող առ տող՝ ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամտի և ծախսի միանման հոդվածներն իրար գումարելով: Որպեսզի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնեն ֆինանսական տեղեկատվություն Խմբի՝ որպես մեկ տնտեսական միավորի մասին, իրականացվել են հետևյալ քայլերը.

- Մայր Կազմակերպության և Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների միանման հոդվածները գումարվել են՝ փոխբացառելով Դուստրի մոտ Մայր Կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և Դուստրի սեփական կապիտալում Մայր Կազմակերպության բաժնեմասը.
- Ներխմբային մնացորդները, գործարքները, եկամուտներն ու ծախսերը՝ ամբողջությամբ բացառվել՝ փոխմարվել են.
- որոշվել են հաշվետու ժամանակահատվածում համախմբված Դուստր ընկերությունների շահույթում կամ վնասում չվերահսկող բաժնեմասերը. համախմբված Դուստր ընկերությունների զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասերը ներկայացել են Մայր Կազմակերպության բաժնեմասից առանձին:

Խումբը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից (եթե կան այդպիսիք) շահաբաժինների եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Խմբի՝ վճարումներ ստանալու իրավունքը: Նման դեպքերում ճանաչված եկամուտը պետք է ներառվի այլ եկամուտներում:

3.2 Հասույթի ճանաչումը

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ դրանք ֆիզիկապես հանձնվում են գնորդին իրենց սեփականության իրավունքի փոխանցմամբ:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ դրանց կատարումն իրականացված է, արդյունքները փոխանցված են պատվիրատուին, և կողմերը ստորագրել են դրանց վերաբերյալ փոխադարձ հաշվարկային փաստաթղթերը:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք իրական արժեքով՝ գտված գեղչերից և իրացման հետ կապված հարկերից:

Ապրանքի վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

- Խումբը գնորդին է փոխանցել կատարված աշխատանքների հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը,
- Խումբը չի պահպանում կառավարման այն չափի մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Խումբ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

3.3 Փոխառության ծախսեր

Փոխառության բոլոր ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում տեղի են ունեցել այդ ծախսերը:

3.4 Շահութահարկ

Շահութահարկի ծախսն վճարվելիք ընթացիկ հարկի և հետաձգված հարկի ընդհանուր գումարն է:

Վճարվելիք ընթացիկ հարկը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և նրանց համապատասխան հարկային բազաների տարբերությամբ (որը հայտնի է որպես ժամանակավոր տարբերություն): Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են

բոլոր ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ակնկալվում է, որ ապագայում կբարձրացնեն հարկվող շահույթը:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների համար, որոնք, ակնկալվում է, որ ապագայում կնվազեցնեն հարկվող շահույթը, ինչպես նաև ցանկացած չօգտագործված հարկային վնասները կամ չօգտագործված հարկային գեղչերը: Հետաձգված հարկային ակտիվները չափվում են այն ամենաբարձր գումարով, որը, հիմք ընդունելով ընթացիկ կամ գնահատված ապագա հարկվող շահույթը, առավել հավանական է, որ կփոխհատուցվի:

Հարկային ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշգրտվում է այնպես, որ արտացոլի ապագա հարկվող շահույթների ընթացիկ գնահատումը: Ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հետաձգված հարկային ակտիվը հաշվարկվում է այն հարկման դրույթով, որն ակնկալվում է, որ կկիրառվի ժամանակաշրջանի հարկվող շահույթի (հարկային կորստի) նկատմամբ այն ժամանակաշրջանի համար, որում ակնկալվում է, որ հարկային ակտիվը կիրացվի կամ հարկային պարտավորությունը կմարվի՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ եղած կամ, ըստ էության, ուժի մեջ եղած հարկային դրույթների վրա:

3.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը ու արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման կամ կառուցման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն վերադարձման, և այդ հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրվող այլ ծախսումները:

Եթե կա որևէ հայտանիշ, որ ակտիվի որևէ դասի հաշվեկշռային արժեքը էականորեն տարբերվում է նրա իրական արժեքից, ապա կատարվում է ամբողջական դասի գնահատում:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ըստ դասերի՝ հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Սարքավորումներ	-	5-8 տարի
Գրասենյակային գույք	-	1-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի
Համակարգչային տեխնիկա	-	5 տարի

Չշահագործվող հիմնական միջոցների նկատմամբ մաշվածք չի հաշվարկվում:

Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ակտիվի մաշվածության դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա տվյալ ակտիվի մաշվածությունը վերանայվում է այնպես, որ ապագայում ճիշտ արտացոլի նոր ակնկալիքները:

Հիմնական միջոցի վրա կատարված ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այդ հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները՝ ներառյալ վերանորոգման ու պահպանման, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում դրանց կատարման ժամանակաշրջանում: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ վերանորոգման ծախսերը կապիտալացվում են և հիմնական միջոցների կազմում ներկայացվում են առանձին դասով: Դրանց նկատմամբ հաշվարկվում է մաշվածություն, օգտակար ծառայության ժամկետ է հանդիսանում վարձակալության ժամկետը:

3.6 Ներդրումային գույք

Ակտիվը՝ հողը կամ շենքը, որը պահվում է սեփականատիրոջ մոտ կամ ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալի մոտ, ճանաչվում է որպես ներդրումային գույք՝ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքն առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծապես անկախ են կազմակերպության կողմից պահվող այլ ակտիվներից:

Խմբի ներդրումային գույքը (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) պետք է չափվի ինքնարժեքով (սկզբնական արժեքով)՝ ներառելով գործառնության հետ կապված ծախսումները: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) մաշվածությունը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը:

3.7 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

3.8 Ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները վերանայվում են՝ պարզելու, թե կա արդյոք որևէ հայտանիշ, որ տվյալ ակտիվները կրել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է հնարավոր արժեզրկման որևէ հայտանիշ, ապա արժեզրկվող ակտիվի (կամ կից ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարն ավելի ցածր է հաշվեկշռային արժեքից, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումար, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Նույն կերպ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պաշարները գնահատվում են՝ պաշարների յուրաքանչյուր հոդվածի (կամ համանման հոդվածների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելով: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբ) արժեզրկվել է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման ու վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը համապատասխանաբար հակադարձվում է, ապա ակտիվի (կամ կից ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված, գնահատված արժեքը (պաշարների դեպքում՝ վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները), բայց այնպես, որ ավելացված արժեքը չգերազանցի այն գումարը, որը սահմանված կլիներ, եթե ակտիվի (կից ակտիվների խմբի) արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ նախորդ տարիների համար: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.9 Վարձակալություններ

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական բոլոր այն դեպքերում, երբ փոխանցվում են վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մնացած բոլոր վարձակալությունները դասակարգված են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները ճանաչվում են որպես ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով (կամ եթե ավելի ցածր է, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով)՝ վարձակալության սկզբի դրությամբ: Վարձատուի նկատմամբ ունեցած համապատասխան ֆինանսական պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն: Վարձավճարները հավասարապես բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները պահվում են շահույթի կամ վնասի չափումից: Ֆինանսական վճարները ներառված են հիմնական միջոցների մեջ, որոնք մաշվում և գնահատվում են ճիշտ այնպես, ինչպես սեփական ակտիվները: Գործառնական վարձակալության շրջանակներում վճարվելիք վարձավճարները հաշվվում են շահույթում կամ վնասում՝ վարձակալության տևողության նկատմամբ գծային հիմունքով:

3.10 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է պաշարների ձեռքբերման և արտադրման ծախսերը, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին ու գտնվելու վայր հասցնելու հետ կապված ծախսերը: Անավարտ և պատրաստի արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է նաև արտադրական վերադիր ծախսերն:

Իրացման գուտ արժեք վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) և վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ծախսումները: Իրացման գուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում այդ ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումները այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

Յուրաքանչյուր հաջորդող ժամանակաշրջանում կատարվում է իրացման գուտ արժեքի նոր գնահատում: Երբ պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գուտ արժեք իջեցման նախկին հանգամանքներն այլևս գոյություն չունեն, կամ երբ տնտեսական իրավիճակի փոփոխության արդյունքում առկա է հստակ վկայություն իրացման գուտ արժեքի բարձրացման վերաբերյալ, իջեցված գումարը հակադարձվում է այնպես, որ նոր հաշվեկշռային արժեքը հանդիսանա ինքնարժեքից և վերանայված իրացման գուտ արժեքից նվազագույնը (այսինքն՝ հակադարձումը սահմանափակված է սկզբնապես իջեցված գումարով):

Խումբը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով «Ապրանքանյութական պաշարների փչացման և հնացման» պահուստ:

Խումբը պաշարների ինքնարժեքը որոշում է՝ կիրառելով «Միջին կշռված արժեք» բանաձևը: Միջին կշռված արժեքի բանաձևով յուրաքանչյուր հողվածի ինքնարժեքը որոշվում է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ համանման հողվածների և ժամանակաշրջանի ընթացքում գնված կամ արտադրված համանման հողվածների միջին կշռված արժեքով:

3.11 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապահանջվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորություններն ապահանջվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ ու ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով (շահույթի կամ վնասի միջոցով):

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլվելով գուտ գումարով միայն այն դեպքում, եթե Խումբն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ✓ փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ✓ ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- ✓ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- ✓ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություններում:

Ընդհանուր առմամբ, Խմբի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեքի կամ գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

➤ Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեքի կամ պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեքի կամ պահուստը

ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Խումբը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը (365 օրից ավել) ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարն ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է որպես անհավանական, դուրս են գրվում:

➤ Մնացորդներ դրամարկղում և բանկում

Դրամական միջոցների մնացորդները ներառում են դրամարկղում կանխիկ միջոցներ, ցպահանջ ավանդներ (բանկային հաշիվների մնացորդներ) և դրամական միջոցների համարժեքներ (կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներ, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ):

Ֆինանսական պարտավորություններ

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Խմբի ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ծանոթագրություններում:

➤ Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

➤ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային կրեդիտորական պարտքերը պարտավորություններ են, որոնք հաշվվում են վճարման սովորական պայմաններով և չեն կրում տոկոսներ: Արտարժույթով առևտրային կրեդիտորական պարտքերը վերաձևակերպվում են տեղական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքը: Արտարժույթի փոխարկումից օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամուտներում կամ այլ ծախսերում:

3.12 Սեփական կապիտալ

Մայր կազմակերպության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.13 Արձակուրդային պահուստ

Աշխատակիցների չօգտագործված արձակուրդային գումարների չափով ստեղծված պահուստը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճշգրտման միջոցով:

3.14 Արտարժույթ

Արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվել են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (հետագայում՝ ԿԲ) կողմից սահմանված միջին հաշվարկային փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	31.12.2013 թ-ի դրությամբ	31.12.2012 թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	405.64 ՀՀ դրամ	403.58 ՀՀ դրամ
1 Եվրո	559.54 ՀՀ դրամ	532.24 ՀՀ դրամ
1 ՌԴ ռուբլի	12.44 ՀՀ դրամ	13.27 ՀՀ դրամ

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես այլ եկամուտ կամ ծախս:

4. Հիմնական միջոցներ

ՀՀ հազ. դրամներով	Սարքավորումներ	Գրասենյակային գույք	Տրանսպորտային միջոցներ	Համակարգչային տեխնիկա	Ընդամենը
Արժեք					
31 դեկտեմբերի 2012	275,938	21,881	15,413	3,978	317,210
Ավելացումներ	337,675	8,313	920	237	347,145
Պակասեցումներ	180,135	1,925	-	-	182,060
31 դեկտեմբերի 2013	433,478	28,269	16,333	4,215	482,295
Կուտակված մաշվածք					
31 դեկտեմբերի 2012	129,466	9,693	4,059	474	143,692
Տարվա հատկացումներ	63,415	5,496	2,913	90	71,914
Պակասեցումներ	4,725	985	-	-	5,710
31 դեկտեմբերի 2013	188,156	14,204	6,972	564	209,896
Հաշվեկշռային արժեք					
31 դեկտեմբերի 2012	146,472	12,188	11,354	3,504	173,518
31 դեկտեմբերի 2013	245,322	14,065	9,361	3,651	272,399

31.12.2013 թ-ի դրությամբ Մայր կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 21,468 հազ. դրամ:

5. Ոչ նյութական ակտիվներ

ՀՀ հազ. դրամներով	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Արժեք			
31 դեկտեմբերի 2012	35,295	1,605	36,900
Ավելացումներ	6,089	500	6,589
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբերի 2013	41,384	2,105	43,489
Կուտակված մաշվածք			
31 դեկտեմբերի 2012	8,199	968	9,167
Տարվա հատկացումներ	4,678	433	5,111
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբերի 2013	12,877	1,401	14,278
Հաշվեկշռային արժեք			
31 դեկտեմբերի 2012	27,096	637	27,733
31 դեկտեմբերի 2013	28,507	704	29,211

31.12.2013 թ-ի դրությամբ Մայր կազմակերպության ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 24,192 հազ. դրամ:

6. Գուղվիլ

ՀՀ հազ. դրամներով	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Մեգա Պանտերա» ՍՊԸ-ի բաժնեմասի ձեռքբերման գուղվիլ	1,077,950	1,077,950
«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ի բաժնեմասի ձեռքբերման գուղվիլ	79,750	79,750
Ընդամենը	1,157,700	1,157,700

7. Հետաձգված հարկային ակտիվներ

ՀՀ հազ. դրամներով	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային վճարների պահուստի գծով	3,767	2,930
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	3,767	2,930

31.12.2013 թ-ի դրությամբ Մայր կազմակերպության հետաձգված հարկային ակտիվները կազմել են 3,718 հազ. դրամ:

8. Ընթացիկ և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

Ընթացիկ և ոչ ընթացիկ տրված փոխառություններն իրենցից ներկայացնում են Մայր կազմակերպության կողմից իր աշխատակիցներին տրված անտոկոս փոխառությունները:

ՀՀ հազ. դրամներով	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	6,900	11,950
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ	3,945	2,390

9. Ապրանքանյութական պաշարներ

ՀՀ հազ. դրամներով	Հումք նյութեր	Այլ ապրանքներ	Ընդամենը
31 դեկտեմբերի 2012	8,341	210	8,551
31 դեկտեմբերի 2013	16,033	15	16,048

31.12.2013 թ-ի դրությամբ Մայր կազմակերպության ապրանքանյութական պաշարների մնացորդը կազմել է 2,748 հազ. դրամ:

10. Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ

ՀՀ հազ. դրամներով	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր իրացումների գծով	271,915	151,488
Դեբիտորական պարտքեր բյուջեին	35,180	12,643
Դեբիտորական պարտքեր սոցապ հատկացումների գծով	45	45
Դեբիտորական պարտքեր առհաշիվ անձանց	906	4,072
Այլ դեբիտորական պարտքեր	30	261
Ընդամենը դեբիտորական պարտքեր	308,076	168,509
Տրված կանխավճարներ	22,917	7,125

31.12.2013 թ-ի դրությամբ Մայր կազմակերպության դեբիտորական պարտքերի մնացորդը կազմել է 289,846 հազ. դրամ, իսկ տրված կանխավճարների մնացորդը՝ 20,843 հազ. դրամ:

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

ՀՀ հազ. դրամներով	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ		
ՀՀ դրամ	6,487	1,966
Հաշվարկային հաշիվ		
ՀՀ դրամ	204,880	215,780
Արտարժույթ	364	67
Դրամական միջոցների համարժեքներ		
ՀՀ դրամ	770,946	474,972
Ընդամենը	982,677	692,785

31.12.2013 թ-ի դրությամբ Մայր կազմակերպության դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը կազմել է 971,720 հազ. դրամ:

12. Այլ ընթացիկ ակտիվներ

Խմբի այլ ընթացիկ ակտիվներն իրենցից ներկայացնում են Դուստր ընկերությունների հետաձգված ԱԱՀ գումարները, որոնց մնացորդը 31.12.2013 թ-ի դրությամբ կազմել է 61 հազ. դրամ:

13. Սեփական կապիտալի տարրեր

Մայր Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 30,000 հազ. դրամ, որը ձևավորվել է 150 հազ. դրամ անվանական արժեքով 200 հատ հասարակ բաժնետոմսերի տեղաբաշխումից (բաժնետերերի բաժնեմասերի մասին տեղեկատվությունը տես «Ընդհանուր տեղեկություններ և իրավական կարգավիճակը» բաժնում):

01.01.2012 թ-ի դրությամբ Մայր կազմակերպությունը ունեցել է 370 հազ. դրամի պահուստային կապիտալ: 2012 և 2013 թթ-ին Մայր կազմակերպությունը, կատարել է հատկացումներ պահուստային կապիտալին՝ համապատասխանաբար 4,130 հազ. դրամի և 20,500 հազ. դրամի չափով, ինչի արդյունքում Մայր կազմակերպության պահուստային հիմնադրամի մնացորդը 31.12.2012 թ-ի դրությամբ կազմել է 4,500 հազ. դրամ, և 31.12.2013 թ-ի դրությամբ՝ 25,000 հազ. դրամ:

01.01.2012 թ-ի դրությամբ Խմբի չբաշխված շահույթը կազմել է 23,974 հազ. դրամ (այդ թվում 2012 թ-ին ձեռք բերված «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ի չբաշխված շահույթը): 2012 թ-ին Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի համապարփակ ֆինանսական արդյունքը կազմել է 386,368 հազ. դրամ: Մայր կազմակերպության պահուստային հիմնադրամին կատարված հատկացման արդյունքում (տես վերևում) Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի չբաշխված շահույթը 31.12.2012 թ-ի դրությամբ կազմել է 406,212 հազ. դրամ, իսկ Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի զուտ ակտիվները՝ 440,712 հազ. դրամ:

2013 թ-ին Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի համապարփակ ֆինանսական արդյունքը կազմել է 684,777 հազ. դրամ: 20,500 հազ. դրամ Մայր կազմակերպության պահուստային հիմնադրամին կատարված հատկացման և 200,000 հազ. դրամ Մայր Կազմակերպության բաժնետերերին շահաբաժինների տրամադրման արդյունքում Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի չբաշխված շահույթը 31.12.2013 թ-ի դրությամբ կազմել է 870,489 հազ. դրամ, իսկ Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի զուտ ակտիվները՝ 925,489 հազ. դրամ:

Չվերահսկվող մասնակցության բաժնեմասը՝ «Սեզա Պանտերա» ՍՊԸ-ի ակտիվներում 2012 թ-ից կազմում է 38,025 հազ. դրամ: Բաժնեմասի գումարը 2012 և 2013 թթ-ին ճշտվել է «Սեզա Պանտերա» ՍՊԸ-ի՝ չվերահսկվող մասնակցությանը բաժին հասնող տարեկան վնասի չափով՝ 2012 թ-ին 1,578 հազ. դրամ, և 2013 թ-ին 2,569 հազ. դրամ: Արդյունքում Խմբի ընդամենը սեփական կապիտալում չվերահսկվող մասնակցության բաժնեմասի զուտ գումարը 31.12.2012 թ-ին կազմել է 36,447 հազ. դրամ, իսկ 31.12.2013 թ-ին՝ 33,878 հազ. դրամ:

Խմբի ընդամենը սեփական կապիտալը 31.12.2012 թ-ի դրությամբ կազմել է 477,159 հազ. դրամ, իսկ 31.12.2013 թ-ի դրությամբ՝ 959,367 հազ. դրամ:

14. Վարկեր և փոխառություններ

<u>Երկարաժամկետ</u>	<u>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>		<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>		Տարեկան դրույքը
	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	
Ե. Տրեյստերից ստացված փոխառություն	-	47,473	-	45,885	18%
Ա. Սարգսյանից ստացված փոխառություն	-	44,246	-	42,607	18%
Տ. Ավետիսյանից ստացված փոխառություն	-	44,246	-	40,542	18%
«ՓՄՉ Ներդրումներ» վարկային կազմակերպությունից 21.06.2011 թ-ին ստացված վարկ	-	-	-	6,000	11%
«ՓՄՉ Ներդրումներ» վարկային կազմակերպությունից 26.07.2013 թ-ին ստացված վարկ	-	97,777	-	-	11%
Ընդամենը երկարաժամկետ վարկեր ու փոխառություններ		233,742		135,034	
<u>Կարճաժամկետ</u>	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	Տարեկան դրույքը
Ռ-Դ «Բանկ ՖԻՆԱՍ»-ից ստացված վարկ	-	-	1,400,000	565,012	10.5%
«ՓՄՉ Ներդրումներ» վարկային կազմակերպությունից 21.06.2011 թ-ին ստացված վարկ	-	6,999	-	14,500	11%
«ՓՄՉ Ներդրումներ» վարկային կազմակերպությունից 26.07.2013 թ-ին ստացված վարկ	-	22,223	-	-	11%
Հաշվեգրված տոկոսներ	-	16,892	-	11,210	
Ընդամենը կարճաժամկետ վարկեր ու հաշվեգրված տոկոսներ		46,114		590,722	

31.12.2013 թ-ի դրությամբ Խմբի ստացված բոլոր վարկերը և փոխառությունները վերաբերում են Դուստր ընկերություններից մեկին՝ «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ին:

15. Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ

ՀՀ հազ. դրամներով	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գնումների գծով	11,106	23,121
Վճարահաշվարկային գործառնությունների գծով	1,414,196	837,976
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	74,931	94,179
Կրեդիտորական պարտքեր սոցալ հատկացումների գծով	-	4,520
Կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	8,516	-
Այլ կրեդիտորական պարտքեր	57	3,712
Ընդամենը կրեդիտորական պարտքեր	1,508,806	963,508
Ստացված կանխավճարներ	36,837	56,013

31.12.2013 թ-ի դրությամբ Մայր կազմակերպության կրեդիտորական պարտքերի մնացորդը կազմել է 1,507,590 հազ. դրամ, իսկ ստացված կանխավճարների մնացորդը՝ 36,795 հազ. դրամ:

16. Պահուստներ

31.12.2013 թ-ի դրությամբ Խմբի պահուստներն իրենցից ներկայացնում են «Աշխատակիցների չօգտագործած արձակուրդային վճարների» և «Վճարահաշվարկային գործունեության փոխանցումների հետվերադարձման» պահուստները՝ 18,835 հազ. դրամ: Մայր կազմակերպության կողմից ստեղծված պահուստաֆոնդերը՝ 18,592 հազ. դրամ է:

17. Հասույթ և մատուցված ծառայությունների ինքնարժեք

Մայր Կազմակերպությունը զբաղվում է ՀՀ տարածքում վճարահաշվարկային և դրամական փոխանցումների իրականացման ծառայությունների մատուցմամբ: Դուստրերից «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ն զբաղվում է դրամական փոխանցումների ապարատների վարձատվությամբ, սպասարկմամբ և գովազդային ծառայությունների մատուցմամբ, իսկ «Սեզա Պանտերա» ՍՊԸ-ն՝ նոր շուկաների ուսումնասիրությամբ:

Խմբի ստացված հասույթը 2013 թ-ին կազմել է 1,639,031 հազ. դրամ, որից 1,506,999 հազ. դրամը Մայր կազմակերպության իրացման հասույթն է: 2012 թ-ին համապատասխան ցուցանիշը Խմբում կազմել է 1,271,569 հազ. դրամ, որից 1,145,152 հազ. դրամը Մայր կազմակերպության իրացման հասույթն է:

2013 թ-ին Խմբի մատուցած ծառայությունների ինքնարժեքը կազմել է 687,499 հազ. դրամ, որից Մայր կազմակերպության մատուցած ծառայությունների ինքնարժեքը կազմել է 597,921 հազ. դրամ: 2012 թ-ին համապատասխան ցուցանիշները կազմել են 525,724 հազ. դրամ և 434,192 հազ. դրամ:

18. Այլ եկամուտներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2013թ. դեկտեմբերի 31-ին</u> <u>ավարտված տարի</u>	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին</u> <u>ավարտված տարի</u>
Պաշարների վաճառքից եկամուտներ	807	507
Եկամուտներ տույժեր տուգանքներց	-	1,223
Դուստր ընկերության բաժնեմասի վաճառք	-	38,025
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտներ	77,505	92,356
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում	-	896
Արտարժույթով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների վերագնահատումից եկամուտ	175,274	104,872
Նյութական վնասի փոխհատուցում	125	-
Այլ եկամուտներ	11,275	17,942
Ընդամենը	264,986	255,821

2013 թ-ին Մայր կազմակերպության այլ եկամուտները կազմել են 203,445 հազ. դրամ:

19. Իրացման ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2013թ. դեկտեմբերի 31-ին</u> <u>ավարտված տարի</u>	<u>2012թ. դեկտեմբերի 31-ին</u> <u>ավարտված տարի</u>
Հիմնական միջոցների մաշվածք	11	23
Տերմինալների սպասարկում	14,675	12,315
Տրանսպորտային ծախսեր	10,264	9,717
Մարկետինգի և գովազդի ծախսեր	11,934	2,909
Այլ ծախսեր	5,031	1,708
Ընդամենը	41,915	26,672

2013 թ-ին Մայր կազմակերպության իրացման ծախսերը կազմել են 13,185 հազ. դրամ:

20. Վարչական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	4,021	16,089
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածք	21,933	19,373
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,040	5,714
Փոստի ու հեռահաղորդակցման ծախսեր	13,687	17,777
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	48,058	36,112
Առդիտ և խորհրդատվություն	5,200	3,000
Բանկային ծախսեր	11,823	6,284
Չփոխհատուցվող հարկեր	738	10,038
Այլ ծախսեր	3,169	5,159
Ընդամենը	111,669	119,546

2013 թ-ին Մայր կազմակերպության վարչական ծախսերը կազմել են 96,735 հազ. դրամ:

21. Այլ ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պաշարների վաճառքի ինքնարժեք	771	409
Կրեդիտորական պարտքի վերականգնում	-	2,347
Վարձավճար	840	5,005
Տույժ-տուգանքներ	402	3,438
Արտարժույթով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների վերազնահատումից ծախս	57,227	91,495
Հիմնական միջոցների վաճառքի ինքնարժեք	47,081	67,532
Դուստր ընկերության բաժնեմասի վաճառք	-	38,025
Հատկացումներ արձակուրդային պահուստին	11,671	12,913
Հատկացումներ «Վճարահաշվարկային գործունեության փոխանցումների հետվերադարձման» պահուստին	7,164	14,458
Այլ ծախսեր	22,701	20,546
Ընդամենը	147,857	256,168

2013 թ-ին Մայր կազմակերպության այլ ծախսերը կազմել են 94,832 հազ. դրամ:

22. Ֆինանսական եկամուտներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ավանդի տոկոսներ	-	1,243
Ընդամենը	-	1,243

2012 թ-ին ստացված ֆինանսական եկամուտները ամբողջովին վերաբերում են Դուստր «Թեյ-Սել Սերվիս» ՍՊԸ-ին:

23. Ֆինանսական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վճարված տոկոսներ	44,938	87,782
Հաշվեգրված տոկոսներ	16,892	11,210
Ընդամենը	61,830	98,992

2013 թ-ին Մայր կազմակերպության ֆինանսական ծախսերը կազմել են 39,284 հազ. դրամ:

24. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

Խմբի 2013 և 2012 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի հիմնական տարրերն են.

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	174,806	119,671
Հետաձգված հարկ	(3,767)	(2,930)
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախս	171,039	116,741

2013 և 2012 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի և ՀՀ-ում գործող հարկային դրույքաչափով բազմապատկված «Շահույթ նախքան հարկումը» ցուցանիշի միջև համեմատությունը ներկայացված է ստորև.

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շահույթ նախքան հարկումը	853,247	501,531
ՀՀ-ում սահմանված շահութահարկի դրույքաչափ 20 %	170,649	100,306
Շահութահարկի նպատակով չնվազեցվող ծախսեր	4,157	19,365
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	174,806	119,671

25. Հարկեր և այլ պարտադիր վճարներ

2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի, ՀՀ հազար դրամ

	Տարվա սկզբին		Շրջանառություն		Տարվա վերջին	
	Գերավճար	Ապառք	Վճարված	Հաշվարկված	Գերավճար	Ապառք
Շահութահարկ	5,281	93,626	195,048	174,806	5,281	73,384
Եկամտահարկ	63	553	553	-	63	-
Եկամտային հարկ	-	-	63,619	64,900	39	1,320
ԱԱՀ ¹	7,171	-	110,838	99,273	18,963	227
Գույքահարկ	2	-	87	68	21	-
Սոցապ վճար ²	45	4,520	5,924	1,404	45	-
Տույժ-տուգանքներ	-	-	1,236	1,236	-	-
Այլ վճարներ	126	-	17,788	7,101	10,813	-
Ընդամենը	12,688	98,699	395,093	348,788	35,225	74,931

¹ ԱԱՀ «Վճարված» ցուցանիշը ներառում է մատակարարներին և մաքսատանը վճարված ԱԱՀ-ն:

² 01.01.2013 թ-ի դրությամբ եկամտահարկի և սոցապ վճարների մասին օրենքների գործողության դադարեցման հետևանքով, 2013 թ-ին Մայր կազմակերպության կողմից ավել վճարված 1,404 հազ. դրամ սոցապ վճարների գումարը հաշվանցվել է Մայր կազմակերպության եկամտային հարկի պարտավորության հետ: Հաշվանցված գումարը ներառված է վերը նշված աղյուսակի «Շրջանառություն» բաժնի եկամտային հարկի «Վճարված» սյան 79,814 հազ. դրամ գումարի մեջ:

26. Կապակցված կողմերի բացահայտում

«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ին տրամադրված փոխառություններ.

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)

2013թ. դեկտեմբերի
31-ի դրությամբ

Ե. Տրեյստերից ¹	
Ստացված փոխառություն	47,473
Ա. Սարգսյանից ²	
Ստացված փոխառություն	44,246
Տ. Ավետիսյանից ³	
Ստացված փոխառություն	44,246

¹ Ե. Տրեյստերը Մայր կազմակերպության բաժնետերն է:

² Ա. Սարգսյանը Մայր կազմակերպության բաժնետերն է:

³ Տ. Ավետիսյանը Մայր կազմակերպության բաժնետերն է:

2013 թ-ին Խմբի տնօրեններին հաշվարկված աշխատավարձերը.

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)

2013թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

Ա. Ազատյան	
«Թեյ-Սել» ՓԲԸ-ի տնօրեն	15,384
Մ. Հարությունյան	
«Թեյ-Սել Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն	4,800
Ա. Խաչատրյան	
«Մեզա Պանտերա» ՍՊԸ-ի տնօրեն	1,071

Այս ծանոթագրությունում չեն բացահայտվում ներխմբային գործարքները:

27. Գործարար միջավայր

27.1. ՀՀ սուվերեն վարկանիշը

«Ֆիքշ» միջազգային վարկանշային կազմակերպությունը 2014 թ-ի փետրվարի 14-ին հերթական վերանայման ժամանակ ՀՀ վարկանիշները՝ երկրի վերին սահմանաչափը և հեռանկարը թողեց անփոփոխ: Մասնավորապես ՀՀ-ին շնորհեց արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի **BB-** վարկանիշ **“կայուն”** հեռանկարով: Արտարժույթով կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի համար սահմանեց **B** վարկանիշ՝ **“կայուն”** հեռանկարով, իսկ որպես երկրի վարկանիշի վերին սահմանաչափ սահմանեց **BB** մակարդակը: «Ֆիքշի» կողմից **BB-** վարկանիշը ստացող երկիրն համարվում է վճարունակության ռիսկի միջին մակարդակ ունեցող երկիր:

Ստորև ներկայացված է ՀՀ և հարևան մի քանի երկրների սուվերեն վարկանիշների և այդ վարկանիշի հեռանկարների աղյուսակը:

Երկիր	սուվերեն վարկանիշ	սուվերեն վարկանիշի հեռանկար
Հայաստան	BB-	կայուն հեռանկար
Ուկրաինա	CCC	բացասական հեռանկար
Հունաստան	B-	կայուն հեռանկար
Կիպրոս	B-	բացասական հեռանկար
Վրաստան	BB-	կայուն հեռանկար
Սերբիա	B+	բացասական հեռանկար

Հայաստանն իր սուվերեն վարկանիշով չորս մակարդակով գերազանցում է Ուկրաինային՝ **CCC**, երեք մակարդակով գերազանցում է Հունաստանին և Կիպրոսին՝ **B-** և մեկ մակարդակով Սերբիային **B+**: Հայաստանի և Վրաստանի սուվերեն վարկանիշները համապատասխանում են իրար:

Ինչ վերաբերում է սուվերեն վարկանիշի հեռանկարներին, իր վարկանիշի **“կայուն հեռանկարով”** Հայաստանը տարբերվում է Արևմտյան Եվրոպայի երկրների թվում գտնվող Պորտուգալիայից, Իտալիայից և Իսպանիայից, որոնց վարկանիշների հեռանկարները **“բացասական”** են: Արևելյան Եվրոպայի երկրներից բացասական են Սլովենիայի, Խորվաթիայի, Սերբիայի և Կիպրոսի սուվերեն վարկանիշների հեռանկարները:

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք գործում են ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից են՝ բիզնեսի ոլորտում ու տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի համեմատաբար փոքրածավալ ներգրավվածությունը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեկուսացված լինելը համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից:

Երկրի տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և դրա հետևանքով ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

2013 թ-ին ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ-ում էլ ավելի է աճել: Դրա արտահայտման ձևերից են՝ նվազ եկամուտը, արտաքին ֆինանսական կառույցների միջոցների նվազումը և Սփյուռքից դրամական միջոցների ներհոսքի կրճատումը:

Կազմակերպությունն իր շրջանառու միջոցների բավարար մակարդակն ապահովել է ի հաշիվ բանկային վարկերի:

27.2. ՀՀ արտահանման և ներմուծման ցուցանիշներ

2014 թ-ի ապրիլ ամսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 490.4 մլն ԱՄՆ դոլար: Ցուցանիշը մարտ ամսվա համեմատ նվազել է 2.5 %-ով, իսկ 2013 թ-ի ապրիլի համեմատ աճել է 8.4 %-ով:

➤ 2014 թ-ի ապրիլ ամսին արտահանման ծավալները կազմել են 118.6 մլն ԱՄՆ դոլար՝ զիջելով նախորդ ամսվա նույն ցուցանիշին 8.7 %-ով և գերազանցելով 2013 թ-ի ապրիլ ամսվա ցուցանիշին 4.1 %-ով,

➤ 2014 թ-ի ապրիլ ամսվա ներմուծուման ծավալները կազմել են 371.8 մլն ԱՄՆ դոլար՝ զիջելով նախորդ ամսվա նույն ցուցանիշին 0.4 %-ով և գերազանցելով 2013 թ-ի ապրիլ ամսվա ցուցանիշին 9.9 %-ով:

Արտաքին առևտրաշրջանառության բացասական սալդոն կազմել է 253.2 մլն ԱՄՆ դոլար. այլ կերպ ասած՝ ներմուծումը գերազանցել է արտահանմանը մոտ 3.04 անգամ:

27.3. Տրանսֆերտներ

Ստորև ներկայացված է 2014 թ-ի ապրիլ ամսվա ընթացքում Հայաստանի բնակչության կողմից առևտրային բանկերի միջոցով ստացված և արտահանված տրանսֆերտների ծավալները:

Երկիր	Ներկայացված է հազար ԱՄՆ դոլարով		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	126,260	20,755	105,505
ԱՄՆ	10,642	14,535	(3,893)
Այլ երկրներ	30,509	36,581	(6,073)
Ընդամենը	167,411	71,871	95,539

2014 թ-ի ապրիլին տրանսֆերտների զուտ ներհոսքը կազմել է 95.5 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ հոսած տրանսֆերտների 75.4 %-ը ՌԴ-ից է: Ընդ որում, եթե տվյալներից բացառենք ՌԴ-ը, ապա զուտ ներհոսքը կլինի բացասական:

Համեմատության համար 2014 թ-ի հունվար ամսվա տրանսֆերտների զուտ ներհոսքը կազմել է 78.6 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ հոսած տրանսֆերտների 81 %-ը եղել է ՌԴ-ից: Բացասական է եղել միայն այն երկրների զուտ ներհոսքը որոնց հետ ՀՀ քաղաքացիները ծավալում են առևտրական գործունեություն՝ Չինաստան, Թուրքիա, ԱՄԷ:

Ստորև ներկայացված է 2014 թ-ի հունվար ամսվա ընթացքում Հայաստանի բնակչության կողմից առևտրային բանկերի միջոցով արտերկրից (ըստ երկրների) ստացված և արտահանված տրանսֆերտների ծավալները:

Երկիր	Ներկայացված է հազար ԱՄՆ դոլարով		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	80,707	11,201	69,505
ԱՄՆ	5,977	2,198	3,779
Ղազախստան	1,341	132	1,209
Գերմանիա	1,204	808	396
Ուկրաինա	1,092	927	165
Ֆրանսիա	1,068	618	451
Իսպանիա	483	221	261
ԱՄԷ	463	576	(113)
Թուրքիա	97	216	(119)
Չինաստան	74	1,039	(965)
Այլ երկրներ	7,091	3,019	4,072
Ընդամենը	99,597	20,955	78,641

Ստորև ներկայացված է Հայաստանի բնակչության կողմից առևտրային բանկերի միջոցով արտերկրից (ըստ երկրների) ստացված տրանսֆերտների ծավալները՝ 2014 թ-ի հունվար ամսվա և համեմատության համար 2013 թ-ի ամբողջ տարվա համար:

Երկիր	2014թ. հունվար ամիս		2013թ. տարեկան	
	Հազար ԱՄՆ դոլարով	տոկոսային	Հազար ԱՄՆ դոլարով	տոկոսային
Ռուսաստանի Դաշնություն	80,707	81.0	1,606,600	85.9
ԱՄՆ	5,977	6.0	82,000	4.4
Ղազախստան	1,341	1.3	23,700	1.3
Գերմանիա	1,204	1.2	15,500	0.8
Ուկրաինա	1,092	1.1	17,000	0.9
Ֆրանսիա	1,068	1.1	14,600	0.8
Իսպանիա	483	0.5	6,400	0.3
ԱՄԷ	463	0.5	7,700	0.4
Թուրքիա	97	0.1	1,800	0.1
Չինաստան	74	0.1	1,300	0.1
Այլ երկրներ	7,091	7.1	93,500	5
Ընդամենը	99,597	100.0	1,870,100	100.0

2013 թ-ին ստացված տրանսֆերտները կազմել են 1 մլրդ 869,7 մլն ԱՄՆ դոլար: 2012 թ-ի համեմատ ցուցանիշն աճել է 11 %-ով:

27.4. Հետհաշվեկշռային իրադարձություններ

- ❖ 2014 թ-ի ապրիլ ամսին սպառողական զների ինդեքսը 2013 թ-ի նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 104.4, իսկ 2014 թ-ի փետրվարի համեմատ կազմել է 100.5:
- ❖ 2014 թ-ի ապրիլ ամսին տնտեսական ակտիվության ինդեքսը 2013 թ-ի նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 104.1, իսկ 2014 թ-ի հունվարի համեմատ կազմել է 103.3:

2014 թ-ի ապրիլ ամսին կենտրոնական բանկի սահմանաժ տոկոսադրույքները.

- Դրամական միջոցների ներգրավման 5.75
- Լոնբարդային ռեպո 8.75
- Վերաֆինանսավորման 7.25

ԿԲ խորհրդի 2014 թ-ի մայիս ամսվա նիստի որոշման համաձայն տոկոսադրույքները նվազել են 0.25 %-ով:

28. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

28.1 Արժուքային ռիսկ

31.12.2013 թ-ի դրությամբ Խմբի դրամական միջոցների էական մասը ՀՀ դրամով է: Խումբը ենթարկվում է ՀՀ դրամի արժեզրկման ռիսկի ազդեցությանը:

28.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ֆինանսական ճգնաժամի հետևանքով այս ռիսկը խիստ աճել է: Կորուստներից խուսափելու նպատակով Խումբը ընդունել է քաղաքականություն, որի համաձայն համագործակցում է միայն վճարունակ անձանց հետ:

28.3 Կապիտալի ռիսկի կառավարում

Խմբի կապիտալը կազմված է կանոնադրական կապիտալից, պահուստային հիմնադրամից և չբաշխված շահույթից: Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որ ապահովի իր գործունեության անընդհատությունը՝ միաժամանակ առավելագույնի հասցնելով բաժնետերերի շահույթը:

28.4 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Իրացվելիության և Հայաստանի շուկայում հրապարակված «տոկոսադրույքի հայտանիշների» բացակայության, ինչպես նաև այն փաստի հիման վրա, որ Խմբի գործարքների մի մասն իրականացվել է կապակցված կողմերի հետ և առանձնահատուկ բնույթի է, իրատեսական չէ որոշել կապակցված կողմերի տրամադրած անտոկոս փոխառությունների իրական արժեքները:

Այլ դեպքերում իրական արժեքը որոշվում է՝ վկայակոչելով շուկայական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ կամ գեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների գծով շուկայական տոկոսադրույք: Արդյունքում, ղեկավարության համոզմամբ, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

29. Պայմանական պարտավորություններ

29.1. Ապահովագրություն

ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Խումբը ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Խումբը ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Բացառություն է կազմում Խմբի ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունը, որը ծածկում է վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասը:

29.2. Անորոշություններ

Քանի դեռ սույն ֆինանսական հաշվետվության վերը նշված անորոշություններում առկա են տարակուսանքներն ու ենթադրությունները, Խմբի ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե դրանք ինչ չափով կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների ու պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

Խմբի 2013 թ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական ճշգրտումի ազդեցությունները, եթե կան այդպիսիք, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ Հայաստանում: